

Արձանագրություն N 1-09/16

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2016 թ.-ի սեպտեմբերի 22-ի նիստի

Ներկա էին՝ Թորքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Խաչատրյան Գ.Մ. (Ֆ.մ.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Պողոսյան Ա.Ա., Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Բաղունց Գ. Ռ., Զաքարյան Գ.Է. (ուսանող), Մնացականյան Հ.Գ. (ուսանող), Պետրոսյան Ա.Կ. (ուսանող), Իշխանյան Ա.Գ. (ուսանող)։

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ.դոկտոր-պրոֆեսոր.), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ. դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ)։

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին.

2.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնառության առկա համակարգերում մագիստրոսական թեզերի առաջադրման, հաստատման, ձևավորման և պաշտպանության» կարգի մասին.

3. «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթական ծրագրերի ակադեմիական խմբերի կուրսղեկների գործունեության».

Լսեցին 1- Ներկայացվեց ԱՄՆ Ռենոյի Նեվադա համալսարանի պրոֆեսոր՝ Պերճ Բերբերոզլուին (Բերբերյան) Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում շնորհելու առաջարկ (զեկուցող՝ Հ.Թորքմաջյան)։ Գիտխորհուրդը որոշում է.

Որոշեցին 1- ԱՄՆ Ռենոյի Նեվադա համալսարանի պրոֆեսոր՝ Պերճ Բերբերոզլուին (Բերբերյան) շնորհել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Լսեցին 2- «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնառության առկա համակարգերում մագիստրոսական թեզերի առաջադրման, հաստատման, ձևավորման և պաշտպանության» կարգի մասին (զեկուցող՝ Պ.Հու. Գասպարյան).

Որոշեցին 2-Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնառության առկա համակարգերում մագիստրոսական թեզերի առաջադրման, հաստատման, ձևավորման և պաշտպանության կարգը:

Լսեցին 3- «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթական ծրագրերի ակադեմիական խմբերի կուրսղեկների գործունեության» կարգի նախագծի մասին (գեկուցող՝ Հ.Թոքմաջյան)

Արտահայտվեցին-Ա.Առաքելյան, Թ.Գրիգորյան, Վ.Մուսայելյան: Առաջարկվեց կուրսղեկների գործունեության իրականացման համար սահմանել ամսական 10000 (տաս հազար) ՀՀ դրամի չափով հավելավճար:

Որոշեցին 3- Հավանություն տալ «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթական ծրագրերի ակադեմիական խմբերի կուրսղեկների գործունեության» կարգի նախագծին և այն ներկայացնել հոգաբարձուների խորհրդին:

Նախագահ՝ ստորագրություն
Քարտուղար՝ ստորագրություն

Հ.Վ.Թոքմաջյան
Ա.Ա.Առաքելյան